

Էլեն Դավթյան
Հայաստանի պատմության թանգարան
davtyanelen2000@gmail.com

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԳՐԱԴԱՐԱՆԸ, ՀԱՅԱԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՄԱՆ ՎԱՅՐ*

Հիմնաբառեր. Հայաստանի պատմության թանգարան, գրադարան, մշակութային ժառանգություն, հնատիպ գրքեր, մամուլի ֆոնդ, փոխանակելի ֆոնդ

Ներածություն

Հայաստանի պատմության թանգարանի գրադարանը կարևոր դեր է կատարում հայկական մշակույթի, պատմության և գրավոր ժառանգության հավաքագրման, պահպանման և հանրահռչակման գործում: Տարիների ընթացքում մշակութային օջախում ձևավորվել է արժեքավոր տպագիր և ձեռագիր նյութերի հավաքածու, որն ամբողջության մեջ ներկայացնում է հայկական տպագրության, գրականության և մշակույթի բազմաշերտ պատմությունը: Թանգարանի գործունեության ընթացքում հատուկ ուշադրություն է հատկացվել գրադարանի հավաքածուի համալրմանը և պահպանմանը՝ կարևորելով հայ ժողովրդի մշակութային ժառանգությունը ներկայացնող նյութերի հավաքագրումը և հասանելիության ապահովումը:

Թանգարանի գրադարանը, որպես ոչ հանրային հաստատություն, ունի աշխատանքային հատուկ կանոնակարգ. այստեղից կարելի է օգտվել միայն տնօրենության գրավոր թույլտվության դեպքում, ինչը պայմանավորված է արխիվային նյութերի բացառիկ բնույթով: Ըստ Հայաստանի պատմության թանգարանի 1942թ. մարտի 15-ի N^o 19 հրամանի՝ թանգարանի գրադարանում պահվող գրականությունը գրադարանից դուրս չի տրվում, քանի որ այդ նյութերը թանգարանում համարվում են ցուցադրման ենթակա գրականության նմուշներ (ՀՊԹ արխիվ, հրաման N19):

Քրադարանում պահվող նյութերի մեծ մասն արտացոլում է հայ մշակույթի, գրատպության զարգացման ուղին: Հավաքածուն ընդգրկում է հին ու եզակի տպագիր նյութեր, ինչպես նաև գրքեր, որոնք անցել են վերականգնման երկար գործընթաց՝ գիտահետազոտական նպատակով սպասարկելու համար:

Գրադարանի ստեղծման և զարգացման պատմությունը

Հայաստանի պատմության թանգարանի գրադարանը հանդիսանում է հայկական գիտության, մշակույթի և պատմության կարևորագույն պահապաններից

* Ստացվել է 09.01.2025թ., ուղարկվել է գրախոսության՝ 29.01.2025թ., ընդունվել է տպագրության՝ 13.08.2025թ.:

մեկը ստեղծման առաջին օրերից: Առ այսօր գրադարանն ակտիվ համալրվում է գնումներով և նվիրատվություններով:

Թանգարանի գրադարանը գործունեությունը սկսել է 1921–1922 թթ. ձմռանը: Կովկասի հայոց ազգագրական ընկերության հիմնադիր և ղեկավար Երվանդ Լալայանի ջանքերով Թբիլիսիից Երևան է փոխադրվել ընկերության հարուստ հայագիտական գրադարանը (Ղաֆադարյան 1962, 208)՝ 22.000 միավորով, որը դարձել է թանգարանի առաջին գրադարանային ֆոնդը: Ֆոնդի 20.000 միավորը փոխանցվել է Ալ. Մյանսիկյանի անվան Հանրային գրադարանին, իսկ 2000-ը մնացել է թանգարանում՝ կազմելով գրադարանի հիմնական ֆոնդը (ՀՊԹ արխիվ, Գործ N1, Հայաստանի պատմության թանգարանի գրադարանի հաշվետվություններ, պլաններ (1947–1973թթ), 375):

Ի սկզբանե գրադարանը տեղադրված է եղել Մշակույթի տան փոքր սենյակներից մեկում, քանի որ թանգարանը դեռևս չուներ համապատասխան տարածք: Այդ ժամանակ թանգարանի ղեկավարը ժողովրդական նկարիչ Մարտիրոս Սարյանն էր: Այս շրջանում թանգարանի և գրադարանի գործունեությունն արտացոլում էր Հայաստանի խորհրդայնացումից հետո ձևավորված նոր մշակութային քաղաքականությունը, որի նպատակն էր մի տեղում կենտրոնացնել հայ ժողովրդի պատմական և մշակութային ժառանգությունը:

Գրադարանի համալրումը և ընդլայնումը

1922 թ., երբ Մշակույթի տանը թանգարանին հատկացվում է ևս երկու սենյակ և մեկ դահլիճ, գրադարանը սկսում է համալրվել պատմության, ազգագրության, հնագիտության, ճարտարապետության և գեղարվեստական գրականության ոլորտներին առնչվող նոր գրքերով: Գրադարանին էին նվիրաբերվում ինչպես անձնական հավաքածուներ, այնպես էլ թանգարանի գիտարշավների ընթացքում ձեռք բերված արժեքավոր գրքեր:

1923 թվականից թանգարանը կոչվում է «Հայաստանի Կենտրոնական Պետական թանգարան» և նրա կազմում ընդգրկվում են գեղարվեստական, ազգագրական, հնագիտական, պատմագրական, ավելի ուշ՝ ճարտարապետական բաժինները: Գրադարանն այս ժամանակաշրջանում արդեն ավելի գիտական բնույթ էր ստանում՝ տրամադրելով գիտաշխատողներին անհրաժեշտ գրականությունը՝ հիմնականում պատմության, ազգագրության, հնագիտության ու ճարտարապետության վերաբերյալ:

Հետագա տարիներին, հատկապես 1930–1940-ական թվականներին, գրադարանի համալրման շրջանակն ընդլայնվում է: Տարբեր գիտարշավների արդյունքում այստեղ էին հայտնվել գրքեր Աստրախանից, Բաքվից և Խորհրդային Միության այլ քաղաքներից: 1936 թ., երբ Կենտրոնական պետական թանգարանը վերանվանվում է Հայաստանի պետական պատմական թանգարան, Կենտրոնական թանգարանի մի մասը դառնում է Գեղարվեստի թանգարան, իսկ մյուս մասը՝ Պատմագրական թանգարան: Այդ ժամանակ գրադարանի ֆոնդում առկա էր 8700 միավոր գրականություն, որից Գեղարվեստի թանգարանին հատկացվում է 572 միավոր, իսկ Պատմագրական թանգարանին՝ 800 միավոր (ՀՊԹ արխիվ,

Գործ N1, Հայաստանի պատմության թանգարանի գրադարանի հաշվետվություններ, պլաններ (1947–1973թթ.), 376):

1939թ., երբ լուծարվում է Տեխնիկատնտեսական թանգարանը, նրա գրադարանի ֆոնդը փոխանցվում է Հայաստանի պետական պատմական թանգարանին: Արդյունքում գրադարանը համալրվում է 800 միավորով՝ մասնավորապես տեխնիկատնտեսական թեմաներով (ՀՊԹ արխիվ, Գործ N1, Հայաստանի պատմության թանգարանի գրադարանի հաշվետվություններ, պլաններ (1947–1973թթ), 376):

1943թ. Հեղափոխության թանգարանի գրադարանի ֆոնդը՝ 2000 միավոր (ՀՊԹ արխիվ, Գործ N1, Հայաստանի պատմության թանգարանի գրադարանի հաշվետվություններ, պլաններ (1947–1973թթ), 376), փոխանցվում է Հայաստանի պետական պատմական թանգարանին:

1940-ական թվականներին գրադարանում առկա էր 18,000 միավոր: Գրադարանը ապահովում էր թանգարանի գիտաշխատողներին այն գրականությամբ, որը պետք էր նրանց հետազոտական աշխատանքների համար՝ հատկապես հնագիտության, ազգագրության, ճարտարապետության, աշխարհագրության և պատմության ոլորտներից: Ավելի ակտիվ էր դարձել միջազգային գրքափոխանակությունը, որի արդյունքում Եվրոպայում և Ռուսաստանում տպագրված բազմաթիվ արժեքավոր նյութեր, այդ թվում հնատիպ գրքեր, ուղարկվել են թանգարանին:

Այս շրջանում գրադարանն ուներ հատուկ բաժիններ՝ աշխարհագրության, պատմության, հնագիտության, ազգագրության և ճարտարապետության վերաբերյալ գրքերով, որոնք տրամադրվում էին հիմնականում թանգարանի գիտաշխատողներին՝ նպատակ ունենալով աջակցել նրանց հետազոտական աշխատանքներին: Գրադարանն արդեն ամբողջությամբ բավարարում էր գիտական համայնքի պահանջները:

Խիստ կարևորվում էին անհատական նվիրատվությունները, որոնց շարքում առանձնացնենք հատկապես Պերճ Կարապետյանին: Վերջինս տարիներ շարունակ զբաղվել է հայկական դրամագիտությամբ և իր հավաքածուից նվիրաբերել է մի քանի տասնյակ աշխատություններ, որոնցից շատերը գրադարանում առկա չէին մինչ այդ:

Մինչև 1936թ. գրադարանը չուներ վարիչ (գործով զբաղվում էին գիտաշխատողները): 1944թ. գրադարանի վարիչ է դառնում Թերեզա Ղազարյանը, ով հաստիքը զբաղեցնում է մինչև 1974թ.: Նրանից հետո գրադարանի վարիչի պարտականությունները անցնում են Սուսաննա Ռոստոմյանին (ՀՊԹ արխիվ, Գործ N1, Հայաստանի պատմության թանգարանի գրադարանի հաշվետվություններ, պլաններ (1947–1973թթ.), 362): 1990թ. վերջերից գրադարանը փոխանցվեց նոր վարիչին՝ Ռոզա Բաղդասարյանին, ով ուներ համապատասխան մասնագիտական կրթություն և թանգարանում աշխատում էր 1957 թվականից:

Քարտեզների ֆոնդի ստեղծումը և նշանակությունը

Քարտեզների ֆոնդը ձևավորվել է թանգարանի հիմնադրմանը զուգահեռ: Այստեղ ներառված են ինչպես ձեռագիր, այնպես էլ տպագիր քարտեզներ, որոնք

մեծապես կարևոր են Հայաստանի պատմության ու աշխարհագրության ուսումնասիրության համար: Ֆոնդում արժեքավոր են հատկապես 19-րդ դարի Հայաստանի պատմությունը ներկայացնող այն քարտեզները, որոնք թվագրվում են 19-րդ դարի կեսերից մինչև մեր օրերը:

Քարտեզների ֆոնդի արժեքն առավել է ընդգծվում, երբ դրանք առնչվում են Հայաստանի պատմական իրադարձություններին, տպագրարվեստի զարգացմանը, տարածքային ամբողջականությանը:

1976 թ. առաջարկվել է քարտեզների ֆոնդը առանձնացնել գրադարանից, քանի որ նրա արժեքը, ինչպես նաև մասնագիտացված քնույթը, պահանջում էին հատուկ պահպանման պայմաններ (ՀՊԹ արխիվ, Проверка обменного фонда библиотеки, 25.XII.1975г по 13.IV.1976г / Գրադարանի հետագա աշխատանքները բարելավելու համար հանձնաժողովի առաջարկությունները): Ըստ թանգարանի հին աշխատակիցներից ստացված տեղեկության՝ որոշումը, սակայն, իրականություն է դարձել 1996 թ.:

Մամուլի ֆոնդի ստեղծումը և նշանակությունը

Հայաստանի պատմության թանգարանի գրադարանի կազմում կարևոր տեղ է զբաղեցնում նաև Մամուլի ֆոնդը, որը ներառում է հայերեն թերթերի կազմեր՝ սկսած 19-րդ դարի կեսերից մինչև մեր օրերը: Այս ֆոնդում ընդգրկված են տարբեր ժամանակահատվածներում տպագրված թերթեր և ամսագրեր, որոնք պատմական և սոցիալ-քաղաքական փաստաթղթեր են հանդիսանում: Գրադարանում պահվում է հայերեն առաջին պարբերականը՝ «Ազդարար»-ը, որը տպագրվել է 1796 թ. Հարություն քահանա Շնավոնյանի խմբագրությամբ Մադրասում: Մամուլի ֆոնդում պահվող 19-րդ դարի արժեքավոր նմուշներից են նաև «Բազմավեպ»-ի, «Երոպա»-ի, «Հանդէս ամսօրեայ»-ի, «Արարատ»-ի առաջին համարները և մի շարք այլ նշանավոր պարբերականներ:

Մամուլի ֆոնդի ձևավորումը կարևոր դեր է խաղացել գրադարանի համալրման գործընթացում, քանի որ գիտական ուսումնասիրություններն անհնար է իրականացնել առանց այս կարևոր հավաքածուի ուսումնասիրության: Սովետական Հայաստանում լույս տեսած համարյա բոլոր թերթերն ընդգրկվել են գրադարանի մամուլի ֆոնդում, ինչն ընդգծել է գրադարանի պատմական արժեքը, ինչպես նաև մատուցվող ծառայությունների բազմազանությունը՝ հնարավորություն ընձեռելով գիտաշխատողներին ուսումնասիրելու մամուլը:

Հնատիպ գրքերի ֆոնդի ստեղծում և նշանակությունը

1944 թ. թանգարանի գրադարանին կից ստեղծվել է հայերեն հնատիպ գրքերի առանձին հավաքածու, որտեղ տեղափոխվել են գրադարանում պահվող 258 միավոր հնատիպ գրքերը (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 2, գործ 222, 8):

Այն կարևոր նշանակություն ունի ոչ միայն թանգարանի գիտական աշխատանքում, այլև հայկական գրականության և մշակույթի պահպանման ու ներկայացման գործում: Գրադարանի հնատիպ գրքերն առաջին հերթին վերաբերում են հայկական պատմությանը, մշակույթին, աշխարհագրությանը և ազգային ինք-

նույթանը: Այս հավաքածուն ներառում է գրքեր, որոնք տպագրվել են մինչև 1850 թ. և ունեն մեծ պատմամշակութային արժեք:

Հնատիպ գրքերի հավաքածուն, որը ներկայում կազմում է 1318 միավոր, ընդգրկում է ոչ միայն հայերեն, այլև օտարալեզու տպագրություններ՝ հրատարակված Եվրոպայում և Ռուսաստանում: Հավաքածուն բաղկացած է 1512–1850-ական թվականների հնատիպ գրականությունից և մի քանի ձեռագիր նյութերից, որոնք ունեն բացառիկ գիտական և պատմամշակութային արժեք: Այստեղ են պահպանվում նաև հայերեն տեքստեր պարունակող տպագրությունները, ինչպես նաև հայագիտական օտարալեզու հրատարակությունները, որոնք վերաբերում են հայ ժողովրդի պատմությանը, լեզվաբանությանը, կրոնին, ազգագրությանը և այլ կարևոր թեմաների:

Հավաքածուի մեջ ընդգրկված է առաջին հայկական գիրքը՝ 1512թ. Հակոբ Մեղապարտի կողմից Վենետիկում հրատարակված «Ուրբաթագիրքը», որը հանդիսանում է հայ գրատպության պատմության ամենակարևոր հուշարձաններից մեկը: Նման տպագրական արժեքների պահպանությունը և ներկայացումը կարևոր են ոչ միայն գիտության, այլ նաև հասարակության կրթական ու մշակութային մակարդակի բարձրացման համար:

Հնատիպ գրքերը ևս մեկ անգամ ընդգծում են թանգարանի գրադարանի գիտական արժեքը և նրա դերը հայագիտության զարգացման մեջ: Դրանք օգտագործվում են տարբեր ոլորտներում՝ մասնավորապես պատմագիտության, հնագիտության, ազգագրության և լեզվաբանության մասնաբաժնի ոլորտների համար:

1975 թ. մայիսի 30-ին կազմված ակտում նշվում է, որ 1946–1956 թթ. ընթացքում Հայաստանի գիտությունների ակադեմիայից ստացվել են «Տեղեկագրեր» և օտար լեզվով գրականություն, որոնք հաշվառվել են փոխանակելի ֆոնդում (ՀՊԹ արխիվ, Проверка обменного фонда библиотеки, 25.XII.1975г по 13.IV.1976г / Ակտ, 7 մայիսի 1976թ.): 60–70-ականներին փոխանակելի ֆոնդից իրականացվել են վաճառքներ, որոնց եկամուտներով համարվել են գրադարանի հիմնական ֆոնդերը (ՀՊԹ արխիվ, Проверка обменного фонда библиотеки, 25.XII.1975г по 13.IV.1976г / Ակտ, 7 ապրիլի 1976թ.): Սակայն տարիների ընթացքում փոխանակելի ֆոնդը վերածվել է յուրօրինակ խանութ-պահեստի, ինչը խանգարել է գրադարանի անմիջական աշխատանքներին:

Ըստ արխիվում առկա տեղեկությունների՝ 1985 թ. հաշվետվության (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 2, գործ 148, 98) համաձայն՝ գրադարանի գրքերն արդեն 5 տարի է, ինչ տեղադրվել են նոր պահոցում, սակայն կարիք կա վերանորոգման: Հատկապես առաջնահերթ էր հնատիպ գրքերի ֆոնդի համար օդորակիչների տեղադրումը, քանի որ պայմանները բավարար չէին, ինչը կարող էր վնասել հնագույն հրատարակություններին: Նշվում էր նաև գրադարանի մուտքի դուռը ամրացնելու և ընթերցարահը բարելավելու անհրաժեշտությունը:

1991–1992 թթ. գրադարանին միացվեց նախկին Հեղափոխության թանգարանի գրադարանը՝ իր 12290 միավոր գրքով (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 2, գործ 151, 33): 2008 թ. ՀՀ մշակույթի նախարարության հրամանով, թանգարանի հիմնական ֆոնդից 8362 գիրք փոխանցվեց Շիրակի մարզային գրադարանին (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 2, գործ 456, 32):

2022 թվականից թանգարանի գրադարանի վարիչի պարտականությունները կատարում է Էլեն Դավթյանը, որը շարունակել է գրադարանի ֆոնդերի պահպանումն ու թվայնացումը:

Հայաստանի պատմության թանգարանի գրադարանը ներկայում իրականացնում է մի շարք նախագծեր՝ նպատակ ունենալով բարելավել իր ֆոնդերի պահպանումը, մատչելիությունը և գիտական նշանակությունը: Նախևառաջ, գրադարանում ընթանում է թվայնացման ծրագիր, որի շրջանակում այս փուլում թվայնացվում են միայն գրքերի ցուցակները: Սա մի կարևոր գործընթաց է, որը հնարավորություն կտա հեշտացնել գրքերի նույնականացումը, պահպանությունը և հետագայում՝ արդյունավետ կառավարման համար տվյալների բազայի ստեղծումը: Թվայնացված ցուցակների առկայությունը կօգնի գրադարանի աշխատակիցներին ու հետազոտողներին արագ գտնել անհրաժեշտ տեղեկությունները, ինչը կնպաստի գրադարանի էլ ավելի հասանելիությանը: Ապագայում այս գործընթացը կարող է ներառել նաև որոշ բացառիկ գրքերի և ձեռագրերի թվայնացում՝ ապահովելով արժեքավոր նյութերի ոչ միայն ֆիզիկական պահպանումը, այլև հանրային հասանելիությունը գիտական շրջանակներում: 2013 թ. Ազգային գրադարանում թվայնացվեցին գրադարանի 15 միավոր հնատիպ գրքեր, որոնք բացակայում էին Ազգային գրադարանում (ՀՊԹ արխիվ, ֆոնդ 1, ցուցակ 2, գործ 553, 21):

Թանգարանի գրադարանում առկա փոխանակելի ֆոնդը նույնպես ակտիվ օգտագործվում է փոխանակման գործընթացներում, ինչը հնարավորություն է տալիս գրադարանին ընդլայնել իր ֆոնդերը՝ առանց մեծ ծախսերի: Այս ֆոնդի միջոցով հնարավոր է այլ գրադարաններից և գիտական կենտրոններից ստանալ արժեքավոր նյութեր՝ հարստացնելով հայկական մշակութային ժառանգության պահպանության և ներկայացման գործընթացը: Փոխանակելի ֆոնդը հատկապես կարևոր է, քանի որ այն հնարավորություն է տալիս պարբերաբար համալրել հիմնական ֆոնդը նոր գրքերով և նյութերով, որոնք կարող են այլ կերպ չլինել հասանելի:

Գրադարանի զարգացման ծրագրերի շրջանակում նախատեսվում է իրականացնել մի շարք կարևոր քայլեր: Հիմնական առաջնահերթություններից է անհրաժեշտ սարքավորումների տեղադրումը, հատկապես օդորակիչների ու լուսային հատուկ համակարգերի ներդրումը հնատիպ գրքերի պահպանման համար, ինչը կօգնի պահպանել բացառիկ գրականության ֆիզիկական վիճակը: Այս փոփոխությունները հնարավորություն կտան ապահովել գրքերի պահպանման անհրաժեշտ պայմաններ՝ նվազեցնելով արտաքին միջավայրի ազդեցությունը:

Ապագայում նախատեսվում է նաև ստեղծել միջազգային համագործակցային կապեր, ինչը կօգնի ներգրավել արտասահմանյան գիտնականների և ուսումնասիրողների՝ համատեղ գիտական նախագծերի և միջոցառումների իրականացման համար: Այդ նպատակով գրադարանը նախատեսում է հետազոտական և ուսումնական գործունեության շրջանակներում համագործակցել նաև հայկական բուհերի և գիտահետազոտական կենտրոնների հետ, ինչը նոր հնարավորություններ կբացի երիտասարդ մասնագետների և ուսանողների համար՝ ներգրավելով հայկական մշակույթի հետազոտման գործում:

Այս ծրագրերի իրականացումը կօգնի թանգարանի գրադարանին դառնալ գիտական, ուսումնական և մշակութային արժեքների պահպանության ու տարածման կենտրոն՝ միաժամանակ ընդլայնելով իր գործունեությունը և կարևորելով գիտական համագործակցությունը թե՛ ներհայաստանյան, թե՛ միջազգային մակարդակում:

Եզրափակելով, կարելի է ասել, որ Հայաստանի պատմության թանգարանի գրադարանը կատարում է կարևոր աշխատանք՝ պահպանելու և հանրայնացնելու հայագիտական և մշակութային ժառանգության արժեքավոր նմուշները: Ներկայիս թվայնացման և պահպանության աշխատանքները, ինչպես նաև փոխանակելի ֆոնդի միջոցով գրականության փոխանակումը հնարավորություն են տալիս գրադարանին օպտիմալացնել իր ֆոնդերի կառավարման գործընթացները, պահպանել բացառիկ գրականությունը և ընդլայնել ուսումնասիրությունների մատչելիությունը: Այս նախաձեռնությունները կարևոր են ոչ միայն գանձերի պահպանման, այլև գիտական հետազոտությունների զարգացման համար, ինչը խթան կհանդիսանա ապագա համագործակցությունների և միջազգային կապերի հաստատման գործում:

Գրադարանի զարգացմանը միտված ծրագրերը՝ թվային ենթակառուցվածքների և պահպանման պայմանների բարելավումը, կստեղծեն նոր հնարավորություններ հայագիտական հետազոտությունների և մշակութային ժառանգության տարածման համար: Սրանով գրադարանը կհաստատվի որպես արժեքավոր գիտական ու մշակութային կենտրոն՝ մատուցելով ծառայություններ ինչպես Հայաստանի, այնպես էլ միջազգային գիտական հանրության համար՝ նպաստելով հայ մշակույթի ուսումնասիրության և զարգացման գործին:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ՍԿԶԲՆԱՂԲՅՈՒՐՆԵՐԻ ԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Արխիվային նյութեր

ՀՊԹ արխիվ, Գործ N1, Հայաստանի պատմության թանգարանի գրադարանի հաշվետվություններ, պլաններ (1947–1973թթ):

ՀՊԹ արխիվ, Проверка обменного фонда библиотеки, 25.XII.1975г по 13.IV.1976г

ՀՊԹ արխիվ, հրաման N19:

ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 148:

ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 151:

ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 222:

ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 456:

ՀՊԹ արխիվ, ֆ. 1, ց. 2, գ. 553:

Գրականություն

ՂԱՖԱԴԱՐՅԱՆ 1962 – Ղաֆադարյան Կ., Հայաստանի պետական պատմական թանգարանը, Պատմա-բանասիրական հանդես, 1962, No 2, Երևան, ՀՍՄԻ ԳԱ, էջ 207–215:

ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

ՀՊԹ – Հայաստանի պատմության թանգարան

Elen Davtyan

History Museum of Armenia
davtyanelen2000@gmail.com

**THE LIBRARY OF THE HISTORY MUSEUM OF ARMENIA:
A CENTER FOR ARMENOLOGY AND CULTURAL HERITAGE PRESERVATION**

Keywords: History Museum of Armenia, library, cultural heritage, antique printed books, press fund, exchangeable fund

The Library of the History Museum of Armenia, established in the 1920s, is a unique institution that plays a key role in the preservation and promotion of Armenian cultural heritage. Since its inception, the Library has actively collected rare books, historical newspapers, and other valuable materials that contribute to the study of the history, culture, and identity of the Armenian people.

Among the Library's most important collections is its archive of early printed books, which includes "Urbatagirk", published by Hakob Meghapart in 1512, the first Armenian-language printed book. Another highlight is the Armenian Press Archive, which includes publications such as the first Armenian newspaper "Azdarar" (1794) and important periodicals of the 19th century such as "Armenian Herald" and "Bazmavep". These materials provide invaluable insights into the development of Armenian printing and intellectual thought.

In the modern era, the Library actively integrates digital technologies that not only enhance the preservation of its unique materials, but also make them accessible to a wider audience.

Today, the Library of the History Museum of Armenia is not only a repository of unique artifacts, but also a scholarly center for the advancement of Armenological studies. It plays a key role in the preservation and transmission of cultural values to future generations, strengthening the link between the past, present and future.

Элен Давтян

Музей Истории Армении
davtyanelen2000@gmail.com

**БИБЛИОТЕКА МУЗЕЯ ИСТОРИИ АРМЕНИИ: ЦЕНТР СОХРАНЕНИЯ
АРМЕНОВЕДЕНИЯ И КУЛЬТУРНОГО НАСЛЕДИЯ**

Ключевые слова: Музей истории Армении, библиотека, культурное наследие, старинные книги, фонд прессы, обменный фонд

Библиотека Музея Истории Армении, основанная в 1920-х годах, является уникальным учреждением, играющим ключевую роль в сохранении и популяризации армянского культурного наследия. С момента основания библиотека активно собирает редкие книги, исторические газеты и другие ценные материалы, способствующие изучению истории, культуры и самобытности армянского народа.

Среди наиболее значимых собраний библиотеки – коллекция старопечатных книг. В ней выделяется «Урбатагирк», изданная Акопом Мегхартумом в 1512 году, первая печатная книга на армянском языке. Также особое внимание привлекает фонд армянской прессы, в который входят такие издания, как первая армянская газета «Аздарар» (1794) и значимые периодические издания 19 века, такие как «Армянский Вестник» и «Базмавеп». Эти материалы позволяют исследовать развитие армянской печати и общественной мысли.

В современный период библиотека активно внедряет цифровые технологии, что позволяет не только улучшить условия хранения уникальных материалов, но и сделать их доступными для широкой аудитории.

Библиотека Музея Истории Армении сегодня – это не только хранилище уникальных артефактов, но и научный центр, способствующий развитию арменоведения. Она играет ключевую роль в сохранении и передаче культурных ценностей новым поколениям, укрепляя связь между прошлым, настоящим и будущим.